ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 23-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 21-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը և համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ կետի 8-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները) հաստատելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2019 թվականի մարտի 21-ի թիվ 3-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Լ հրամանի հավելվածով հաստատված կարգի 20-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ ենթակետում «311, 312 և 313» թվերը փոխարինել «435, 436 և 437» թվերով,

2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 257-րդ հոդվածի 2-րդ մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 297-րդ հոդվածի 2-րդ մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 396-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների բացահայտման համար մինչև՝ 150 000 դրամի չափով:»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության անձնակազմին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«25» հուլիսի 2022թ.

ք.Երևան